

## ԿԱՐԾԻՔ

Անաստասիա Յուրիի Շումարովայի

**«Անձի հարմարման մեխանիզմների շարժընթացը երկարադյունաչափական հակամարտության ընթացքում»** խորագրով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Ներկայիս աշխարհաբանական իրողությունները նոր մարտահրավեր են գցում մարդու հոգեկան առողջության խնդրին: Այլևս չի կարելի է խոսել հոգեկան առողջության մասին առանձին անհատների դեպքում, այլ պետք է դիտարկել այն որպես հանրային առողջության խնդիր: Պատերազմները ներկայում դառնել են մարդու առօրեական կյանքն ուղեկցող իրողություններ, ընդ որում ոչ միայն անմիջական աշխարհագրական տարածքում, այլև հեռավար ձևով: Գրեթե բոլորս ներգրված ենք դրանցում համացանցի միջոցով: Փոխվել է նաև զինված հակամարտությունների բնույթը, ինչը չի խախտում մարդկանց առօրեական կյանքի ընթացքը:

Ներկայացվող ատենախոսությունը նվիրված է շարունակական սթրեսի պայմաններում անձի ադապտատիվ մեխանիզմների գործարկմանը և այս խնդիրը դիտարկվում է խաղաղ բնակչության շրջանում՝ համեմատելով տարբեր համակարտությունների մեջ ներգրավվածության աստիճանից: Հարկ է նշել, որ խնդրի դրվածքը շատ հետաքրքրական է ինքնին, քանի որ նոր ճանապարհ է բացում տրավմայի հասկացման և ազդեցության հետևանքների ուսումնասիրության համար: Ինչպես հեղինակը նշում է արդիականության մեջ, տրավմայի հետ կապված

մեկնաբանությունները և հայեցակարգային մոտեցումները դիտարկում են այն որպես անցյալում կատարված իրադարձության, և գրեթե բոլոր միջամտությունները ուղղված են ներկայում անցյալով պայմանավորված տրավմայի ապաքինմանը: Եթե ընդարձակենք տրավմայի հասկացումը որպես պատմական կամ կոլեկտիվ տրավմա, ապա նույնպես տարբեր վերլուծություններում և հայեցակարգերում տեսանելի է տրավմայի՝ անցյալով պայմանավորված հետևանքների վրա կենտրոնացումը: Շարունակական տրավմատիկ սթրեսի կոնցեպտուալիզացիան հնարավորություն է տալիս հասկանալու տրավմայի կումուլյատիվ և ընթացող բնույթը, դիտարկել այն միաժամանակ որպես անհատական և կոլեկտիվ տրավմա:

Աշխատանքը բաղկացած է երկու տեսական և երկու՝ հետազոտության մեթոդաբանությունը և արդյունքները լուսաբանող գլուխներից: Տեսական առաջին գլխում անդրադարձ է կատարվում զինված հակամարտությունների պատմական ակնարկին և դրանց ազդեցությանը քաղաքացիական բնակչության վրա, քննարկվում են զինված հակամարտությունների մեթոդաբանական հիմքերը: Միևնույն ժամանակ առաջին գլխում քննարկվում են արտակարգ իրավիճակների պայմանները և գործոնները: Առանձին ենթագլխով մանրամասն քննարկվում է շարունակական տրավմատիկ սթրեսի տեսական հիմքերը և կիրառական ասպեկտները՝ դիտարկելով վերջինիս համատեքստային գործոնների և հակազդումային վիճակների բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակի կողմից ներկայացվում են անձի ադապտատիվ մեխանիզմների տեսամեթոդաբանական հիմքերը: Մանրամասն և խորքային կերպով ներկայացված են դասական և ժամանակակից մոտեցումները, անդրադարձ է կատարվում ինչպես ոռուս, այնպես էլ արևմտյան գիտնականների աշխատանքներին: Առանձին ենթագլուխներով քննարկվում են ինչպես անձի պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ վերլուծությունները, այնպես էլ քոփինգ-վարքաձևերի վերաբերյալ մոտեցումները: Երկրորդ գլխի վերջում հեղինակը փորձ է

կատարում ներկայացնել իր հեղինակային՝ «շարունակական սթրեսի պայմաններում անձի ադապտատիվ մեխանիզմների ձևավորման մոդելը», համաձայն որի անձի ադապտատիվ վարքաձևերը (պաշտպանական մեխանիզմներ և քոփինգ-վարքաձևեր) պայմանավորված են շարունակական տրավմատիկ սթրեսի օբյեկտիվ պայմաններով և ազդեցության սուբյեկտիվ գնահատմամբ, սակայն որպես միջնորդավորող օղակներ հանդես են գալիս այնպիսի անձնային գործոններ, ինչպիսիք են անձի հոգեկան վիճակները և վերաբերմունքի համակարգը:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվել է հետազոտության մեթոդաբանությունը, ներկայացվել են այն մեթոդիկաները, որոնք կիրառվել են հարցման մեջ, ինչպես նաև արդյունքների վերլուծության տրամաբանությունը: Երրորդ գլուխը բավականին ծավալուն է. կիրառվել են բազմակի գործիքներ, որոնք թույլ են տվել համակողմանի վերլուծել ստացված արդյունքները: Արդյունքների վերլուծության համար նույնպես կիրառվել են մաթ. վիճակագրության տարբեր մեթոդներ (նկարագրական վիճակագրության մեթոդներ, կորելյացիոն վերլուծություն, ռեգրեսիոն վերլուծություն): Այսպիսով, ատենախոսության կառուցվածքի և բովանդակության մեջ հստակ արտացոլվում են ուսումնասիրության նպատակին, խնդիրներին, ինչպես նաև հիմնական և մասնավոր վարկածներին համապատասխան վերլուծությունները և մեկնաբանությունները:

Ատենախոսության մեջ ձևակերպված է նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք բխում են եզրակացություններից, ինչը հիմնավորում է, որ ատենախոսությունը ամբողջական և ավարտուն աշխատանք է:

Հարկ է նշել, որ ատենախոսությունը շարադրված է գրագետ, գովելի է ատենախոսի հետևողականությունը արդյունքների մանրամասն ներկայացման և վերլուծության մեջ: Ատենախոսության հետ ներկայացվող սեղմագիրը ամբողջովին

արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, հիմնական դրույթները և եզրակացությունները:

Այնուհանդերձ աշխատանքում կան որոշ դիտարկումներ և ցանկություններ.

1. *Հեղինակային մոդելի վերաբերյալ դիտարկումներ.* Հեղինակը ներկայացնում է «անձի ադապտացիայի միասնական պաշտպանական-կարգավորիչ մոդելը» երկրորդ գլխի երրորդ ենթագլխի ամենավերջում, գրեթե մեկ էջի սահմաններում: Ցանկալի կլիներ, որ այն ներկայացվեր ավելի ընդարձակ՝ առանձին ենթագլխով կամ երրորդ գլխում որպես առանձին բաժին, քանի որ ամբողջ հետազոտությունը հիմնված է այդ մոդելի վրա: Մասնավորապես, հեղինակը իր մոդելում կարևոր տեղ է հատկացնում անձնային գործոններին: Նույն ենթագլխում իր վերլուծության մեջ հեղինակը հանգում է այն եզրակացությանը, որ շարունակական տրավմատիկ սթրեսի պայմաններում կարևոր է ուսումնասիրել հոգեկան վիճակները և վերաբերմունքի համակարգը, որպես միևնույնիմանակ օղակ տրավմատիկ սթրեսի և անձի ադապտատիվ մեխանիզմների միջև, սակայն բավականաչափ ներկայացված չէ, թե ինչպես է ատենախոսը կոնցեպտուալիզացնում այդ գործոնները իր մոդելի մեջ: Կարծում եմ, որ օրինակ Յանոֆ-Բուլմանի հայեցակարգը բազային համոզմունքների մասին բավական քննարկված չէ, թեպետ հենց այդ հայեցակարգն է ընկած անձնային գործոնների ուսումնասիրման հիմքում հեղինակային մոդելում:

2. *Շարունակական տրավմատիկ սթրեսի օպերացիոնալիզացիայի վերաբերյալ դիտարկումներ.* Հեղինակը ներկայացնում է շարունակական տրավմատիկ՝ սթրեսը, հիմնվելով գոյություն ունեցող մեկնաբանությունների վրա, որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ ընկալումների ամբողջություն, ինչպես նաև որպես անհատական հակազդումների և գործառնության դրսևորումներ: Այս գործոնները դուրս են բերվել կենսագրական հարցման ճանապարհով մեկական հարցերով:

- «Ինչ նշանակալի իրադարձություններ են տեղի ունեցել ձեր կյանքում հակամարտության սկսվելու պահից մինչ այսօր» հարցի համար կան տարբերակներ: Հետաքրքիր է հասկանալ, ինչից ելնելով են ընտրվել այս տարբերակները: Ինչպես են այս տարբերակները մեզ օգնում հասկանալ հակամարտությունների կոնտեքստը: Կամ օրինակ՝ «Ինչպես եք գնահատում այդ իրադարձությունների ազդեցությունը ձեզ վրա» և առաջարկվում են փակ հարցեր դրականից մինչև բացասական: Հարց է առաջանում՝ որ իրադարձությունների, եթե օրինակ մարդիկ ընտրել են «անձի արարքը/ձերբերումները» պատասխանը: Այս մասը կարիք ունի պարզաբանման:
- Հեղինակը նշում է տեսական մասում, որ ի տարբերություն ՀՏԽ-ի շարունակական տրավմատիկ սթրեսը վերաբերում է ընթացիկ երևույթներին և հենց սա է էական տարբերությունը ՀՏԽ-ի հետ, սակայն հարցադրումները վերաբերում են անցյալին: Ցանկալի կլիներ, որ հարցեր լինեին ակնկալվող/ընկալվող վտանգների վերաբերյալ, ինչը ցույց կտար ներկայում տարբեր վտանգների (արժեքային, էքզիստենցիալ, ֆիզիկական) առկայությունը, ինչը հենց թիրախային կարող էր լինել շարունակական տրավմայի համար:
- Բավարար հիմնավորված չէ, թե ինչու է ապագայի հանդեպ վերաբերմունքը, 5 տարվա կտրվածքով նպատակները և նախապատվությունների փոփոխությունները համարվում պաշտպանական գործոններ: Ինչու՞ վերջիններս չի կարելի է համարել քոփինգի ձևեր:

3. Հիմնական և մասնավոր վարկածները. Բոլոր մասնավոր վարկածները իրենց ձևակերպմամբ նույնպես ընդհանուր են թվում: Ցանկալի կլիներ, որ վերջիններս ավելի կոնկրետ ցույց տային, թե ուսումնասիրվող խմբերի միջև ինչ տարբերություններ են ենթադրվում ադապտատիվ մեպանիզմների տեսանկյունից և ինչով է դա պայմանավորված: Հետազոտական մասում ևս կային նշված վարկածներ, որոնք

վերաբերում էին երեք խմբերի միջև տարբեր փոփոխականների փոխկապվածությանը: Ցանկալի կլիներ, որ հեղինակը ցույց տար, թե հետազոտական մասի որ վարկածները ներածության մեջ ձևակերպված որ մասնավոր վարկածներին էին վերաբերում:

4. *Ատենախոսության ծավալը.* Քանի որ ուսումնասիրվել է մոտ 300 աղբյուր, հետազոտության մեջ ներառվել են շատ փոփոխականներ, իսկ հեղինակը փորձել է մանրակրկիտ անդրադառնալ բոլոր արդյունքներին, ատենախոսությունը ծավալով ավելի շատ է, քան նախատեսված է թեկնածուական ատենախոսությունների համար:

5. *Ընտրանքի վերաբերյալ դիտարկումներ.* Միգուցե ատենախոսը էթիկական սկզբունքներից դրդված չի նշել թե մասնակիցները հակամարտությունների որ գոտուց են եղել, արդյո՞ք նույն սոցիալ-մշակութային տարածքից են եղել երեք ուսումնասիրվող խմբերը: Ցանկալի կլիներ այնուամենայնիվ նշվեր, թե որ զինված հակամարտությունների մասին է խոսքը, քանի որ համակամարտությունների և սոցիալ-մշակութային կոնտեքստները ևս կարևոր կարող էին լինել ադապտատիվ մեխանիզմների առանձնահատկությունները հասկանալու համար:

Վերոնշյալ դիտարկումները բնավ չեն իջեցնում աշխատանքի արժեքը: Կատարված է մեծ, ծավալուն աշխատանք, որն ունի տեսական և կիրառական նշանակություն:

Այսպիսով, ատենախոսի կողմից ներկայացվող «*Անձի հարմարման մեխանիզմների շարժընթացը երկարատև ուղղման հակամարտության ընթացքում*» ատենախոսությունը ամբողջական և ավարտում գիտական աշխատանք է, համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանների շնորհման կարգի 7-րդ կետին, այն է՝ գիտական կարևոր խնդրի առաջադրում, իսկ Անաստասիա Յուրիի Շումարովան արժանի է ԺԹ.00.01 «*Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և*

